

(Շարունակութեան մէջ մենք ընդգծում ենք այն բառերը, որ երգի պատառիկներ են յօրինում: Նրանցից առաջինը կարող է վիճելի համարուել. վերջին երկուսը ինձ թուում են անվիճելի): Այլ եւ քաջ ասեն գործեալ Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի, եւ խարդաւանայ լեալ մմին ի տաճարին վիշապաց: Այլ եւ Արտաւազայ ոչ գտեալ, ասեն, քաջի որդւոյն Արտաշիսի, տեղեկիկ ապարանից ի հիմնանայն Արտաշատու՝ նա անց, ասէ, գնաց եւ շինեաց ի մէջ Մարաց գՄարակերտ, որ է ի դաշտին, որ կոչի Շարուրայ: Այլ եւ տեկնայ, ասեն, Սաքեմիկ տիկին տեկնան՝ զարտախուր խաւարտ եւ գտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ»:

Մոռացութեան տալով այս երեք պատառիկները, բնական է, որ չի խօսում նաեւ սըրանց տաղաչափութեան մասին:

* * *

Մեր հնագոյն երգերի տաղաչափութեան խնդիրը քննելուց առաջ, անհրաժեշտ է նախապէս նրանց հնագոյն եւ հարադատ կերպարանքը վերականգնել:

«Հնագոյն» եւ «հարադատ» ասածս, անշուշտ, յարաբերական իմաստով պէտք է հասկանալ: Մեր ձեռքն եղած միջոցներն օգտագործելով՝ պէտք է ջանալ վերականգնել երգերի այն ձեւը, որով նրանք գրուած են Մ. Խորենացու ձեռքով:

Այս նախնական եւ անհրաժեշտ աշխատանքը Լ. Գրէյ չի կատարած: Իր ձեռքի տակ նա ունեցած է Խորենացու մի հին հրատարակութիւն (1841 թ.): Նրան ծանօթ է

սածը) մեր լեզուով վիշապ է (նշանակում): Այլ եւ ասում են. «Արգաւանը ճաշ է կաղմել Արտաշէսի պատուին եւ դաւադրել է նրան վիշապների սեղնատանը»: Այլ եւ (ասում են). «Արտաշէսի քաջ որդի Արտաւազը Արտաշատի հիմնանալու ժամանակ ապարանքի (մի փոքրիկ) տեղ չգտնելով՝ անցաւ, գնաց ու չինեց Մարերի մէջ Մարակերտը»: Այլ եւ ասում են. «Տենչում է Սաթենիկ տիկինը տենչանքներ՝ արտախուր խաւարտ եւ տից խաւարծի Արգաւանի բարձերից» (վերջին հատուածի իմաստը մոլթ է եւ մեկնուած է վերջնապէս):

վերջին հրատարակութիւնը (1913 թ.), որ լոյս է տեսած ձեռագիրների համեմատութեամբ եւ ուր Գողթան երգերը փոքր ինչ տարբեր կերպարանք ունին:

Իսկ «փոքր ինչ» ասածը «չատ մեծ բան» է տաղաչափութեան խնդրի քննութեան ժամանակ, որովհետեւ մի ծածուկ վանկն անգամ նրկատելի մեծութիւն է այստեղ: Մէկ օրինակ բաւական է ասածս ճշմարտելու համար:

Մինչեւ 1913 թիւը մենք կարդում էինք. Երկնէր երկին եւ երկիր Երկնէր եւ ծիրանի ծով (Խորեն. Վենետիկ, 1865, Ա. լա):

Նոր հրատարակութեան մէջ կարդում ենք՝ Երկնէր երկին, երկնէր երկիր, Երկնէր եւ ծովն ծիրանի. (Խորեն. Թիֆլիս, 1913 Ա. լա (լբ):

Արդ՝ այս երգի առաջին տարբերակի ամէն մի տողը եօթ վանկ ունի, իսկ երկրորդ տարբերակի ամէն մի տողը՝ ութ վանկ: Հիմա ո՞րն է այս երգի հեթանոսական չափը. եօթ թէ ութը:

Այս հարցի պատասխանը կախուած է այն բանից, թէ այս երկու տարբերակներից ո՞ր մէկն է երգի հնագոյն եւ հարադատ կերպարանքը: Պարզ է, կարծում եմ, թէ տաղաչափութեան մասին խօսելուց առաջ՝ պէտք է բնագիրը վերականգնել:

* * *

Լ. Գրէյ կարծում է, թէ շատ «դւրիւն» է վերականգնել մեր հնագոյն երգերի տաղաչափութիւնը: Դրա համար՝ իր կարծիքով՝ պէտք է. 1) յապաւել մի քանի աւելորդ բառեր, որ գուցէ երբեմն ձեռագիրների լուսանցքների վրայ նշանակուած բացատրութիւն են եղած եւ յետոյ մտած են բնագրի մէջ. 2) աւելացնել մի քանի քերականական տարբեր եւ մի դերանուն 3) թեթեւակի տեղափոխել մի քանի բառեր. 4) բաղաձայների խմբերի մէջ տեղաւորել ը-եր՝ արտասանութեան դիւրացման համար (էջ 159):

Հետեւենք իր փորձերին:

Լ. Գրէյ այն կանխակալ կարծիքն ունի, որ «Երկնէր երկին» երգի մէջ վեց տող եօթական վանկ պիտի ունենան, իսկ չորս տող իննական վանկ, ուստի առաջարկում է «եւ ի բոցոյն պա-